

Գանատայի Հայոց Թեմը
բոլորեց իր Ազգային Երեսփոխանական Ժողովը

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական 49/2 ժողովը բացուեցաւ Թեմիս Բարեջան Առաջնորդ Տ. Խաժակ Ա. Արք. Յակոբեանի աղօթքով, Հինգշաբթի, Մայիս 24, 2007-ի երեկոյեան ժամը 6-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ժողովասրահին մէջ եւ տեղւոյն Հոգեւոր Հովիւին եւ հոգաբարձութեան հիւրընկալութեամբ:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Թեմիս Ազգային Երեսփոխանները, եկեղեցիներու հոգաբարձական կազմերը, Ազգային Պատգամաւորները, Մեծի Տանն Կիլիկիոյ Իշխանները, Ասպետները եւ Մեսրոպ Մաշտոցի շքանշանակիրները: Ներկայ էին նաեւ քոյր միութեանց ներկայացուցիչները:

Յատկանշական էր ժողովիս հիւրաբար մասնակից Պրն. Չաւեն Թեղիբեանը՝ Ազգային Հերոս Սողոմոն Թեղիբեանի զաւակը, որ խօսք առնելով արտայայտեց իր սրտի անհուն գոհունակութիւնը եւ հպարտութիւնը:

Ողջոյնի իրենց խօսքերը փոխանցեցին Տ. Մեղրիկ Ծ. Կրդ. Բարիքեան, Հոգեւոր Հովիւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, հոգաբարձութեան ատենապետ Պրն. Սարգիս Ղազարեան, Ազգային Վարչութեան ատենապետ Պրն. Գրիգոր Գոլյումճեան եւ Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Տ. Խաժակ Ա. Արք. Յակոբեանը:

Բացման խօսքերէն ետք, ժողովը անցաւ իր օրակարգերու գործադրման եւ առաջին հերթին ներկայացուեցաւ Ազգային Վարչութեան Կրօնական եւ Զաղաքական ժողովներու տեղեկագրերը:

Ազգային Երեսփոխանական Ժողովը իր ընթացիկ մտահոգութիւններէն անկախ, յատկապէս կեդրոնացաւ Հայաստանի Սահմանամերձ գիւղերու վերաշինութեան ծրագրին եւ անոր հետ առընչուող հանգանական աշխատանքներուն: Ինչպէս նաեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ստանձնած Արցախի Արխաւինդ գիւղի վերանորոգումը, որ պիտի կոչուի «Նոր Կիլիկիա»: Նոր Կիլիկիա գիւղը պիտի օժտուի 35 նոր բնակարաններով եւ պիտի ունենայ դպրոց, դարմանատուն, եկեղեցի եւ մշակոյթի կեդրոն, որուն մասնակից պիտի դառնան Կիլիկիոյ Աթոռի բոլոր Թեմերը:

Ժողովը անդրադարձաւ Հիւսիսային Ամերիկայի Թեմերու 50-ամեակի տօնակատարութեան մասին որ պիտի կշռուի 2008 տարուան ընթացքին: Չուգադիպութեամբ նաեւ, Գանատայի Թեմը պիտի տօնակատարէ Տ. Խաժակ Ա. Արք. Յակոբեանի Զահանայական Ձեռնադրութեան 40-ամեակը,

ինչպես նաև Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ 50-ամեակը, Ս. Աստուածածին եւ Ս. Նշան Եկեղեցիներու 25-ամեակները:

Ժողովի անարտին, Երեսփոխանները ընտրեցին Ազգային Վարչութեան Կրօնական եւ Բաղաքական Ժողովներու կազմը, հետեւեալ ձեւով.-

Կրօնական Ժողով

Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան՝ ատենապետ

Տ. Գառնիկ Զինյ. Գոյունեան՝ ատենադպիր

Տ. Զրայր Ա. Զինյ. Նիկոլեան՝ խորհրդական

Բաղաքական Ժողով

Բժիշկ Ժան Առաքելեան՝ ատենապետ

Բժիշկ Կարպիս Զարպոյեան՝ ատենադպիր

Պրն. Րաֆֆի Տէր Պօղոսեան՝ ատենադպիր

Պրն. Արթօ Գապասագալեան՝ գանձապահ

Բժիշկ Պարոյր Թուխմանեան՝ խորհրդական

Տիկին Օսիկ Մխսի-Արթինեան՝ խորհրդական

Պրն. Երուանդ Շահինեան՝ խորհրդական

Պրն. Կարօ Փոստաճեան՝ խորհրդական

Պրն. Թովմաս Ֆրունճեան՝ խորհրդական

Ժողովը փակուեցան Առաջնորդ Սրբազան Զօր պատգամով եւ աղօթքով, ինչպես նաև Կիլիկիա մաղթերգով:

Ուրբաթ երեկոյեան Առաջնորդ Սրբազան Զայրն ու ժողովականութիւնը ներկայ գտնուեցան Մայիսեան Զամերգին, ուր Առաջնորդարանին կողմէ պատուուեցաւ Երեսփոխան ճէյսըն Զէնի՝ The Spirit of Armenia Շքանշանով, Զայութեան հանդէպ իր տարիներու ցուցաբերած նեցուկին համար: